

# Լևոնը և փքաբլիթները 1

Լևոնը շատ է սիրում փքաբլիթներ և գնացել է խանութ դրանց ետևից: Խանութում գործում է  $1+1=3$  ակցիան: Այսինքն 3 փքաբլիթ գնելու դեպքում, նրանցից ամենաքիչ արժեցողը տրվում է անվճար: Օրինակ 1000, 1000 և 1000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 2000 դրամ, իսկ 1000, 2000 և 3000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 5000 դրամ: Խանութում կա  $n$  փքաբլիթ:  $i$ -րդ փքաբլիթը արժի  $d[i]$  դրամ և ունի  $v[i]$  քաղցրություն: Լևոնը քաղցրի սիրահար է, բայց չի սիրում չարաշահել, այդ պատճառով որոշել է գնել ուղիղ 3 փքաբլիթ: Լևոնը ունի  $p$  դրամ և ցանկանում է գնել առավելագույն գումարային քաղցրություն ունեցող 3 փքաբլիթները, որոնք նա կարող է գնել իր ունեցած գումարով:

Պահանջվում է գրել ծրագիր, որը կօգնի Լևոնին պարզել ամենաշատը ինչքան գումարային քաղցրությամբ փքաբլիթներ կարող է նա գնել:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են  $n$  ( $1 \leq n \leq 500$ ) և  $p$  ( $0 \leq p \leq 10^9$ ) թվերը: Երկրորդ տողում տրված է  $n$  թիվ դասավորված ըստ չնվազման, որոնցից  $i$ -րդը ցույց է տալիս  $i$ -րդ փքաբլիթի գինը ( $d[i]$ ,  $0 \leq d[i] \leq 10^8$ ): Երրորդ տողում տրված է  $n$  թիվ, որոնցից  $i$ -րդը ցույց է տալիս  $i$ -րդ փքաբլիթի քաղցրությունը ( $v[i]$ ,  $0 \leq v[i] \leq 10^8$ ):

## Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է տպել 1 թիվ՝ խնդրի պատասխանը: Եթե Լևոնը չի կարող գնել ոչ մի 3 փքաբլիթ պետք է արտածել -1:

## Օրինակ

**Մուտք.**

5 7000

1000 2000 3000 4000 5000

12 1 3 100 101

**Ելք.**

115